«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր

Ընթերցարան

1-ին դասարան

Մանուշակ

Ղազարոս Աղայան

- Ասա՛ ինձ, մանուշա՛կ,

Ինչու՞ ես այդպես շուտ

Դուրս եկել մեն-մենակ.

Դեռևս չի բացվել

Ոչ մի տեղ քեզ նման

Հոտավետ մի ծաղիկ:

- Ես չունիմ մյուսների

Գեղեցիկ հասակը,

Ոչ նրանց հագուստը՝

Զարդարուն ու շքեղ,

Դուք ինձ չեք նկատիլ,

Եթե ես երևամ

Նրանց հետ միատեղ:

Առաջադրանքներ

1.Ո՞ր ծաղիկներն ունեն գեղեցիկ հասակ, զարդարուն ու շքեղ հագուստ: Գրի՛ր այդ ծաղիկների անունները:

_____

2.Ինչպիսի՞ն է մանուշակը: Ճիշտ պատասխանն ընդգծի՛ր:

ա) մեծ բ) փոքր գ) զարդարուն

3.Լրացրո՛ւ բաց թողնված բառը.

- Ա՛յ մանուշակ, ի նչ սիրուն ես:

- Եթե սիրուն եմ, ինչո՞ւ _____

4.Շարունակի՛ր.

ծաղիկ – ծաղիկներ

ծառ -_____

տերև-_____

թերթ-_____

ցողուն-_____

5.Բառերն այբբենական կարգով դասավորի՛ր:

Արևածաղիկ, մանուշակ, վարդ, կակաչ, նարգիզ

_____

_____

_____

Երկու ձագուկ



Երկու ձագուկ մի հասկ գտան: Հասկում շատ հատիկներ կային: Ագահ ձագուկները բռնեցին հասկի երկու ծայրերից ու սկսեցին քաշել՝ մեկը իր կողմը, մյուսը՝ իր: Հասկն այնքան քաշքշեցին, որ երկուսն էլ ընկան: Այդ ժամանակ ծիտը վրա հասավ, հասկը ճանկեց ու թռավ:

Առաջադրանքներ

1. Կարդա՛, ընդգծի՛ր ձագուկներին բնութագրող բառերը:

ա) ընկերասեր բ) կամակոր գ) ագահ դ) ուրախ

2.Ինչպե՞ս ավարտվեց ձագուկների վեճը: Տեքստից դուրս գրի՛ր համապատասխան նախադասությունները:

_____

_____

3.Հասկը ո՞ւմ բաժին հասավ: Տեքստից դուրս գրի՛ր համապատասխան նախադասությունը:

_____

_____

Ծիածան

Աթաբեկ Խնկոյան

Մթին ամպերից

Եկավ հորդ անձրև,

Պարզեց երկինքը,
Ծագեց ջինջ արև:

Կանաչ ու կարմիր

Կապեց ծիածան,

Ջրի կաթիլներն

Ալ - գոհար դարձան:

Քամին հանդարտեց.

Էլ չկա փոշի.

Հողը տաքացավ,

Ծխեց գոլորշի:

Առաջադրանքներ

1.Լրացրո՛ւ բաց թողնված բառերը:

Մթին ամպերից

Եկավ հորդ _____,

Պարզեց _____,

Ծագեց ջինջ _____:

2.Լրացրո՛ւ պակասող բառը:

Տարվա եղանակներ՝ _____, ամառ, _____ , ձմեռ:

Գարնան ամիսներ՝ մարտ, _____, մայիս :

Շաբաթվա օրեր՝ երկուշաբթի, _____

_____

3.Կազմի՛ր բառակապակցություններ:

հորդ_____

ջինջ_____

ամպամած_____

անձրևոտ_____

4.Գրի՛ր կենդանիների անունները՝ համարակալած վանդակներում:



Կամակոր այծիկները



Երկու կամակոր այծ մի նեղ կամրջի վրա հանդիպեցին: Երկուսը միասին չէին կարող անցնել կամրջով. պետք է նրանցից մեկը մյուսին ճանապարհ տար:

- Դու ետ գնա, որ ես անցնեմ,- ասաց մի այծիկը:
- Ինչո՞ւ դու ետ չես գնում, որ ինձ ես ասում,- պատասխանեց մյուսը:

Այծիկները վիճեցին. ճակատ ճակատի խփեցին, սայթաքեցին ու ընկան ջուրը:

Առաջադրանքներ

1.Կարդա՛, ընդգծի՛ր այծիկներին բնութագրող բառերը:

ա) խելացի բ) կամակոր գ) զիջող դ) անխելք

2.Նույն իմաստն ունեցող բառերը ներկի՛ր միևնույն գույնով:

սահել կռվել սայթաքել վիճել

3.Այծիկները որտե՞ղ իրար հանդիպեցին: Տեքստից դուրս գրի՛ր համապատասխան նախադասությունը:

_____

_____

4.Ինչպե՞ս ավարտվեց պատմությունը: Տեքստից դուրս գրի՛ր համապատասխան նախադասությունը:

_____

_____

5.Գրի՛ր նշված կենդանիների ձագերի անունները:

այծ - ուլ

կով -_____

խոզ-_____

ոչխար-_____

ձի-_____

արջ-_____

հավ-_____

շուն-_____

Ա՛յ, քեզ շաբաթ

Ջանի Ռոդարի

Արթնացա երկուշաբթի,

Հորանջեցի երեքշաբթի,

Չորեքշաբթի անուշ-անուշ ձգվեցի,

Հինգշաբթի կրկին քնեցի:

Քնեցի ուրբաթ, շաբաթ,

Ու գործի չգնացի:

- Կորչի գործը, - ասացի:

Լավ էր՝ արդեն կիրակի

Ամբողջ օրը քնեցի:

Առաջադրանքներ

1.Գրի՛ր պակասող բառերը:

Արթնացա _____

Հորանջեցի _____:

_____անուշ-անուշ ձգվեցի,

_____կրկին քնեցի:

2. Կազմի՛ր բառակապակցություններ:

_____

_____

3.Բառերն այբբենական կարգով դասավորի՛ր:

Օր, շաբաթ, ամիս, տարի

_____

4. Գտի՛ր շաբաթվա օրերն ու գունավորի՛ր:

ա	ու	ն	մ	ի	ր	ե	ր	կ	ու	շ	ա	բ	թ	ի	վ	տ	խ
շ	ր	խ	պ	կ	ք	ր	խ	ծ	ճ	փ	ֆ	հ	լ	ի	տ	ս	ա
կ	բ	ռ	ռ	ֆ	ու	ր	պ	չ	ո	ր	ե	ք	շ	ա	բ	թ	ի
զ	ա	ղ	հ	կ	յ	շ	վ	ո	ո	ե	տ	ը	օ	պ	խ	ծ	շ
ա	թ	թ	է	գ	օ	ա	հ	զ	կ	ի	ր	ա	կ	ի	լ	յ	մ
ե	ր	ե	ք	շ	ա	բ	թ	ի	զ	դ	ջ	ֆ	ն	գ	պ	ո	մ
ֆ	գ	չ	ճ	ք	ո	ա	զ	ղ	ֆ	ն	մ	ռ	ու	պ	փ	թ	ջ
ջ	ձ	է	փ	ո	ո	թ	ռ	հ	ի	ն	գ	շ	ա	բ	թ	ի	յ

5.Շարունակի՛ր:

կատու-կատուներ

շուն-_____

բաժակ-_____

երեխա-_____

տուն-_____

վրձին-_____

Ճուտիկը

Լինում է, չի լինում, մի պստիկ ճուտիկ է լինում:

Ա՛յ, այսպիսի ճուտիկ:

Բայց նա կարծում էր, որ ինքը մե՛ծ է, շա՛տ մեծ է: Երբ ման էր գալիս բակում, փքվում էր, գլուխը բարձր պահում:

Ա՛յ, այսպես:

Ճուտիկը մայրիկ ուներ: Անունը՝ Չալիկ՝ սիրո՛ւն, չաղլի՛կ:

Ա՛յ, այսպիսի մայրիկ:

Չալիկը ճուտիկին շատ էր սիրում: Նրան կերակրում էր որդերով: Մի անգամ Չալիկի վրա հարձակվեց սևուկ փիսիկը և քշեց նրան մինչև լճի ափը:

Ա՛յ, սա է սևուկ փիսիկը:

Ճուտիկը մնաց ցանկապատի մոտ կանգնած: Հանկարծ նա տեսավ, որ աքլորը թռավ ցանկապատի վրա, թևերը թափ տվեց, վիզը ձգեց:

Ա՛յ, այսպես:

Եվ բարձր ձայնով կանչեց՝ ծո՜ւղ-րո՜ւ-ղո՜ւ:

Հետո դես ու դեն նայեց ու ասաց.

-Մի՞թե ես քաջ չեմ, մի՞թե լավը չեմ:

Այս բանը ճուտիկին շատ դուր եկավ: Ինքն էլ վիզը ձգեց:

Ա՛յ, այսպես:

Եվ ամբողջ ուժով ծլվլաց.

-Պի՛-պի՛-պի՛-պի՛: Ես էլ եմ քաջ, ես էլ եմ լավը:

Բայց սայթաքեց և ընկավ ջրով լի փոսը:

Ա՛յ, այսպես:

Գորտը տեսավ
ճուտիկին, ծիծաղեց.

-Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛: Ա՛յ պստլիկ, ա՛յ ճստլիկ ճուտիկ, դու ո՞ւր, աքլորն ո՞ւր:

Առաջադրանքներ

1. Պատմի՛ր այս պատմության ճուտիկի մասին:

_____

_____

2. Մի քիչ էլ Չալիկ մայրիկի մասին պատմի՛ր:

_____

_____

3.Չալ փիսիկի մասին ի՞նչ կասես:

_____

_____

4.Շարունակի՛ր ըստ օրինակի.

ճուտ - հավ

կորյուն -_____

հորթ -_____

քոթոթ -_____

գառ -_____

ուլ - _____

քուռակ-_____

խոճկոր-_____

5.Մեկ բառով գրի՛ր:

թռչունների խումբ-_____

ձիերի խումբ-_____

ձկների խումբ-_____

կովերի խումբ-_____

ոչխարների խումբ-_____

մեղուների խումբ-_____

գայլերի խումբ-_____

ուղտերի խումբ-_____

6.Ո՞ր կենդանին որտե՞ղ է ապրում:

Արջն ապրում է որջում:

Ձին_____

Հավն_____

Մեղուն _____

Գիտե՞ս, որ…



Թռչնի անկողինը միշտ իր հետ է: Նրա ներքնակը փորի փետուրներն են: Նրա վերմակը մեջքի փետուրներն են: Այդքան տաք անկողնով կարելի է քնել ամեն տեղ՝ հողի, ջրի, ձյան վրա և նույնիսկ՝ ձյան մեջ:

Առաջադրանքներ

1.Ավարտի՛ր նախադասությունները:

Նրա ներքնակը_____

Նրա վերմակը_____

2.Ի՞նչ թռչուններ գիտես: Գրի՛ր նրանց անունները:

_____

_____

3.Կազմի՛ր նոր բառեր՝ փոխելով բառերի առաջին տառերը:

լող-_____

մատ-_____

մարդ-_____

մութ-_____

սար-_____

4.Ի՞նչ թռչուններ գիտես: Աղյուսակում գտի՛ր դրանց անունները և ներկի՛ր:

լ	ս	ա	լ	ո	ր	լ	ա	ի	վ	թ
օ	ա	մ	ո	ր	ո	ր	ք	ու	լ	ու
պ	գ	կ	ծ	ի	վ	մ	ա	ի	վ	թ
ա	ր	ծ	ի	վ	լ	օ	ղ	թ	օ	ա
պ	կ	ա	չ	կ	ա	չ	ա	ղ	ա	կ
ս	հ	ծ	ի	վ	լ	օ	ղ	կ	ռ	ր
ա	ա	յ	կ	ա	չ	ա	ա	ա	կ	ի
հ	վ	գ	պ	ո	կ	ռ	ու	ն	կ	վ
ա	ր	ա	գ	ի	լ	կ	պ	լ	մ	ը
ն	պ	լ	ա	ն	պ	ա	գ	ռ	ա	վ
դ	ճ	ն	ճ	ղ	ու	կ	ա	ք	ա	պ

Մուկն ընկերանում է մկան հետ

Մուկն ուզում էր ուժեղ ընկեր ունենալ, բայց չգիտեր, թե ով է ուժեղը: Դիմում է արևին: Արևն ասում է.

- Ամպն է ուժեղ: Ամպն ինձ ծածկում է:

Ամպին է դիմում: Ամպն ասում է.

- Քամին է ուժեղ: Քամին ինձ քշում է:

Քամուն է դիմում: Քամին ասում է.

- Քարն է ուժեղ: Քամին քարին բան չի անի:

Քարին է դիմում.

- Մարդն է ուժեղ: Մարդն ինձ ճեղքում է:

Մարդուն է դիմում: Մարդն ասում է.

- Ցորենն է ուժեղ: Առանց ցորենի ես կմեռնեմ:

Ցորենին է դիմում: Ցորենն ասում է.

- Մուկն է ուժեղ: Մուկն ինձ ուտում է:
- Որ էդպես է, ուրեմն ուժեղը մուկն է: Ես էլ մկան հետ կընկերանամ,- ինքն իրեն ասում է մուկը:

Առաջադրանքներ

1.Ո՞ւմ մոտ գնաց մուկը: Թվարկի՛ր:

_____

_____

2.Ի՞նչն է ինչից ուժեղ:

Ամպն ուժեղ է_____

Քամին ուժեղ է_____

Քարն ուժեղ է_____

Մարդն ուժեղ է_____

Ցորենն ուժեղ է_____

Մուկն ուժեղ է_____

3.Վանկերն իրար միացրո՛ւ, ստացի՛ր բառեր:

քա	տակ
ցո	սին
ան	ղիկ
ծա	մի
լու	ձրև
գե	րեն

քամի,_____

_____

_____

Գիտե՞ս, որ…

Գիտե՞ս, որ նապաստակն այնքան էլ վախկոտ չէ: Նա պառկում է մեջքի վրա և թշնամու հետ կռվում իր երկար ու սուր ճանկերով: Նապաստակը նաև խորամանկ է: Նա խառնում է իր հետքերը և խաբում է որսի շներին:

Իզուր չէ, որ նապաստակի աչքերը շիլ են: Նա ոչ միայն իր դիմացն ու շուրջն է տեսնում, այլև՝ մի քիչ էլ հետևը: Ականջներն էլ են պտտվում չորս կողմ և լսում են բոլոր կողմերից եկած շշուկները:

Առաջադրանքներ

1.Շարունակի՛ր միտքը:

Նապաստակի աչքերը_____

Իսկ ականջները_____

2.Ինչպե՞ս է նապաստակը պաշտպանվում:

_____

_____

_____

_____

3.Գրի՛ր հետևյալ բառերի հակառակ իմաստն ունեցող բառերը:

վախկոտ-_____

քիչ-_____

խորամանկ-_____

դիմաց-_____

երկար-_____

թշնամի-_____

սուր-_____

4.Գրի՛ր հետևյալ բառերի նույն իմաստն ունեցող բառերը:

քաջ-_____

բարեկամ-_____

սպիտակ-_____

զվարթ-_____

կամաց-_____

պոչ-_____

մեծ-_____

փոքր-_____

Գիտե՞ս, որ…

Աղվեսը շատ լավ է լսում: Դա օգնում է, որ նա իր համար կեր գտնի: Երբեմն աղվեսը ետևի թաթերի վրա է քայլում, ցատկոտում է ու պտտվում: Բայց նա ոչ թե պարում է, այլ ականջ է դնում ձյան տակ վազվզող մկների ծվծվոցին: Ամենաթույլ ծվծվոցից էլ աղվեսը կարողանում է գտնել մկանը:

Առաջադրանքներ

1.Աղվեսն ինչպե՞ս է գտնում մկներին:

_____

_____

_____

2.Ի՞նչ գիտես աղվեսների մասին, գրի՛ր:

_____

_____

_____

3.Տրված բառերով բառակապակցություններ կազմի՛ր: Ավելացրո՛ւ ինչպիսի հարցին պատասխանող բառեր:

աղվես - խորամանկ աղվես

ականջ-_____

մուկ-_____

ձյուն-_____

պոչ -_____

4.Կռահի՛ր բառը և գրի՛ր:

անջ _____

վերջա _____

աղ _____

5.Բառերը տեղադրի՛ր համապատասխան սյունակներում:

Կաչաղակ, արջ, թութակ, ծիծեռնակ, վագր, կոկորդիլոս, արագիլ, կապիկ:

կենդանի	թռչուն

Քամին ու մժղուկը Աթաբեկ Խնկոյան

Արև անցավ,
Քամին վեր կացավ:
Մժեղը տեսավ,
Որ քամին իրեն պտտեց,
Ինքն էլ մի կերպ
Խոտը բռնեց, խտտեց:
_Մժեղ, խոտն ինչո՞ւ ես խտտել:
_ Քամի, էն քեզանից եմ ազատել,
Որ չհանես սարեսար,
Որ չզցես քարեքար.
Բա գյուղացին մեղքը չի՞,
Հնձած խոտը զուր կորչի:

Առաջադրանքներ

1.Գրի՛ր քամուն, մժեղին, արևին բնութագրող բառեր:

_____ քամի

_____ մժեղ

_____ արև

2.Ինչպիսի հարցին պատասխանող բառերին ավելացրո՛ւ ինչ հարցին պատասխանող բառեր, ստացի՛ր բառակապակցություններ:

կանաչ _____

ծաղկած_____

տաք_____

սառը_____

3.Շարունակի՛ր.

ծիրանի ծառ - ծիրանենի

խնձորի ծառ-_____

տանձի ծառ-_____

սալորի ծառ-_____

դեղձի ծառ-_____

5.Գտի՛ր թաքնված վայրի կենդանիներին:

գայլ

արջ

վագր

ռնգեղջյուր

առյուծ

կապիկ

ա	զ	գ	ա	յ	լ	ու	ս	մ	ն	կ	ի	տ	ս	ա
ռ	ղ	վ	մ	ն	կ	լ	ի	օ	ը	ռ	յ	հ	չ	բ
ճ	պ	վ	շ	կ	ա	պ	ի	կ	ու	ն	ա	ծ	խ	ջ
ֆ	գ	ա	մ	է	փ	թ	ձ	ու	ջ	գ	ճ	չ	հ	շ
է	ս	գ	թ	հ	ն	մ	ա	ֆ	տ	ռ	թ	ջ	վ	կ
բ	դ	ր	հ	ղ	փ	ռ	ն	գ	ե	ղ	ջ	յ	ու	ր
ձ	գ	ս	բ	թ	դ	ֆ	խ	շ	խ	ա	ծ	ու	յ	ը
է	ա	ռ	յ	ու	ծ	թ	ֆ	ռ	դ	գ	լ	յ	վ	ր

Պո՞չն է թանկ, թե՞ կյանքը

Դու երևի մողես տեսել ես: Մողեսներն ամռանը վազվզում են տաք քարերի վրա: Իսկ բռնե՞լ ես մողեսի պոչից: Այդ ժամանակ նա պոչը թողնում է ու փախչում: Այդպես է մողեսը ազատվում թշնամիներից:



Զարմացած թշնամին ուշադիր նայում է շարժվող պոչին, իսկ մողեսը թաքնվում է: Մի քանի շաբաթ հետո հին պոչի տեղը նոր, փոքրիկ պոչ է աճում:

Առաջադրանքներ

1.Ավարտի՛ր նախադասությունները:

Ամռանը մողեսները վազվզում են_____

_____

Երբ մողեսին բռնում են, նա պոչը_____

_____

Մի քանի շաբաթից հին պոչի տեղը_____

_____

2.Փորձի՛ր ավելի շատ տեղեկություն հավաքել մողեսների մասին:

Ես իմացա, որ …_____

_____

_____

_____

3.Բառերը տեղադրի՛ր համապատասխան սյունակներում:

Մողես, թիթեռ, օձ, մեղու, զատիկ, կոկորդիլոս, մոծակ, կրիա:

միջատ	սողուն

4.Յուրաքանչյուր շարքում գտի՛ր և ընդգծի՛ր ավելորդ բառը:

ա) մողես, արագիլ, օձ
բ) ձուկ, թիթեռ, մեղու
գ) աքաղաղ, հավ, թութակ
դ) կոկորդիլոս, մեղու, ճանճ
ե) կրիա, օձ, ձուկ

Գիտե՞ս, որ …

Մեղուները շատ աշխատասեր են: Փեթակում ամեն մեղու իր աշխատանքն ունի: Մի մասը կեր է բերում: Մյուսները դա լցնում են մեղրահացերի մեջ: Մի խումբ մեղուներ մաքրում են մեղրահացերը: Մյուս խումբը թափահարում է թևիկները և օդափոխում փեթակը: Մեղուներն ունեն նաև պահակներ: Նրանք պահպանում են մուտքը: Միայն մայր մեղուն չի աշխատում: Բոլորը խնամում են նրան: Փեթակում միայն նա է ձվեր դնում: Հետո դրանցից փոքրիկ մեղուներ են դուրս գալիս:

Առաջադրանքներ

1.Ինչպիսի՞ միջատներ են մեղուները: Ընդգծի՛ր ճիշտ պատասխանը:

ա) փոքրիկ բ) հսկա գ) ծույլ դ) աշխատասեր

2.Ի՞նչ են անում պահակ մեղուները: Դուրս գրի՛ր այդ նախադասությունը:

_____

3.Իսկ դու ի՞նչ գիտես մեղուների մասին: Ավելացրո՛ւ ևս մի քանի փաստ:

_____

_____

_____

_____

4.Ավարտի՛ր նախադասությունները:

Մեղուն աշխատասեր է_____

Կրիան դանդաղաշարժ է_____

Աղվեսը խորամանկ է_____

Կապիկը ճարպիկ է_____

5.Շարունակի՛ր.

աշխատասեր – ծույլ

առողջ-_____

մեծ-_____

ուժեղ-_____

սառը-_____

բարձր-_____

6.Գրի՛ր հետևյալ խմբերի անունները:

ա. Բզեզ, սարդ, թիթեռ, մրջյուն, զատիկ, մոծակ, մեղու, ճանճ.

_____

բ. Ծիծեռնակ, արծիվ, ագռավ, արագիլ, ճնճղուկ, կռունկ, սոխակ.

_____

գ. Լոլիկ, վարունգ, գազար, բողկ, կաղամբ, դդում, կարտոֆիլ, պղպեղ.

_____

դ. Սալոր, դեղձ, խնձոր, սերկևիլ, կեռաս, նուռ, տանձ.

_____

Ջանի Ռոդարի

Կոնֆետի անձրևը

Մի անգամ քաղաքում կոնֆետի անձրև էր գալիս: Կոնֆետները կարկտի նման էին, բայց սպիտակ չէին, այլ գունավոր՝ կարմիր, կապույտ, կանաչ: Մի տղա կերավ կանաչ կոնֆետն ու տեսավ, որ խնձորի է: Մի ուրիշ տղա էլ կարմիրը փորձեց, ու պարզվեց, որ դա էլ ելակի է:

-Վա՛յ, իսկական կոնֆետներ են, ինչ լա՛վն են, — ուրախացան երեխաներն ու արագ-արագ լցրին գրպանները: Ինչքան էլ նրանք հավաքում էին, մեկ է՝ կոնֆետները չէին վերջանում, անձրևի պես թափվում էին: Կոնֆետները շատ անուշ հոտ ունեին ու ոտքի տակ սառույցի պես խրթխրթում էին: Դպրոցից տուն գնացող երեխաներն էլ հասցրին պայուսակները լցնել: Տատիկներն էլ կոնֆետով զամբյուղներ էին տանում: Իսկական տոն էր: Քաղաքում մարդիկ սպասում էին, որ երկնքից էլի կոնֆետներ կթափվեն, բայց կոնֆետի ամպը ոչ մի անգամ չի երևացել:

Առաջադրանք

1.Ինչի՞ անձրև կուզեիր, որ գար: Հորինի՛ր պատում, ընթերցի՛ր ընկերներիդ համար:

_____

_____

_____

_____

_____

2.Գտի՛ր և գունավորի՛ր մեծատառերը:

ա	ֆ	վ	զ	Ֆ	Ր	ռ	կ	թ	Ճ
ք	Մ	զ	Ջ	ճ	ց	ֆ	մ	ն	բ
դ	պ	Ն	չ	ճ	ր	դ	Պ	ն	Կ
տ	Գ	ի	վ	Փ	շ	ց	մ	պ	է
Ի	լ	Է	հ	դ	ց	Ռ	ճ	շ	Բ
ծ	Տ	խ	Թ	Խ	Ջ	դ	լ	Է	ճ
Լ	փ	ջ	ր	ճ	ի	Օ	փ	ու	յ
վ	դ	Ց	ռ	լ	Դ	կ	Ք	ժ	Չ

3.Գուշակի՛ր հանելուկները, լրացրո՛ւ խաչբառը:

Ուղղահայաց

1. Թագավոր չի, թագ ունի,
Երկարաճիտ կոշիկ ունի,
Ժամացույցին չի նայի,
Երկար քնել չի թողնի: /քղղաա/

2.Ուր ուզում է՝ մնում է,
Ինչքան ուզում՝ մնում է,
Հալածում է, հալածվում,
Տաքուկ տեղում քնում է: /տուակ/

3.Ինքը՝ կարմիր,
Կերը՝ կանաչ,
Տվածը՝ սպիտակ: /վկո/



Հորիզոնական

1.Անանցանելի անտառներով
Աղմկաշարժ վտառներով՝
Ձեռ է առնում ամենեցուն
Մեզ ազգական այդ ծաղրածուն: /պկկիա/

2. Բրդոտ մոթով, թաթը ծուռ,
Տանձ է սիրում, ոչ թե՝ նուռ: /ջրա/

3. Հանդն է շրջում հեկտար-հեկտար,
Տուն է բերում անուշ նեկտար: /դումե/

4. Սևուկ ....,
Սիրուն բալիկ,
Ման եմ եկել սարե-սար,
Կաթն եմ արել քեզ համար,
Դռնակը բա՛ց, ներս գամ ես,
Անուշ-անուշ կաթ տամ քեզ. /լուկի/

5. Ո՞ր թռչունն է մեզ հին ընկեր,
Նամակատար, նամակաբեր,
Նշանն է խաղաղության,
Բարեկամն է ողջ մարդկության: /դանիվա/

4.Ավարտվում է գարունը և շուտով ամառ է: Գրի՛ր նամակ ամռանը և հիշեցրո՛ւ, որ քնից արթնանալու ժամանակն է:

_____

_____

_____

Օգտվել ենք՝

Միդա Պետրոսյան «Ընթերցարան»
Միդա Պետրոսյան «Մատենիկ 2»
Լուսինե Փաշայան «Ընթերցարան»
Մանուշակ Աբրահամյան «Ընթերցարան»
Ջաննի Ռոդարի «Հեքիաթներ»

Բովանդակություն

Մանուշակ. Ղ. Աղայան 2
Երկու ձագուկ..... 4
Ծիածան. Աթաբեկ Խնկոյան 5
Կամակոր այծիկները 7
Այ, քեզ շաբաթ. Ջանի Ռոդարի 9
Ճուտիկը ..... .11
Գիտե՞ս, որ... Թռչնի անկողինը 15
Մուկն ընկերանում է մկան հետ 17
Գիտե՞ս, որ... Նապաստակ 19
Գիտե՞ս, որ... Աղվես 21
Քամին ու մժեղը. Աթաբեկ Խնկոյան 23
Գիտե՞ս, որ... Ո՞չն է թանկ, թե՞ կյանքը 25
Գիտե՞ս, որ... Մեղուներ 27